

## ԿԱՐԾԻՔ

Իվանյան Արուսյակ Հենրիկի

Տրանստերմինոլոգիայի դրսևորումը գործարար անգլերենում

Ժ. 02. 07. - «ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ  
ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գիտության և հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններն արտահայտվում են լեզվով և արտացոլվում լեզվում: Լինելով գործիք, որով ձևակերպվում են գիտական տեսությունները, օրենքներն ու դրույթները, գիտական հասկացություններն ու դրանց համակարգերը՝ լեզուն հանդես է գալիս և՛ որպես գիտելիքների արտահայտման միջոց, և՛ որպես գիտության կառուցվածքային տարր: Այսինքն՝ գիտության մեջ լեզվի դերը պատահական չէ: Լեզուն իր գործառույթներով ներթափանցում է գիտության մեջ առաջին հերթին տերմինների միջոցով, որոնք ապահովում են գիտության և տեխնիկայի, արտադրության, հասարակական կյանքի բոլոր բնագավառների զարգացումն ու կատարելագործումը և նպաստում հասարակության առաջընթացին: Այս հարցում առաջնային տեղ է զբաղեցնում տերմինաբանությունը, որի հետ չեն կարող համեմատվել լեզվական մյուս միջոցները, քանի որ գիտական հետազոտությունների արդյունքները արտացոլվում են տերմինաբանության մեջ: Տեխնիկայի և գիտության զարգացումը նպաստում է հատուկ մասնագիտական և գիտական տերմինաբանության կայացմանը, տերմինների և լեզվի համակարգում տերմինաբանության տեսությունների ձևավորմանը: Տերմինաբանությունը մի նոր թափ ու ծավալ է ստանում տեխնիկական և գլոբալ տնտեսության ձևավորման մեր դարաշրջանում՝ ոչ միայն գործածվելով որպես լեզվի մի նեղ մասնաշերտ, այլև մուտք գործելով զանգվածային իրազեկման ոլորտները, ներթափանցելով առօրյա խոսակցական լեզվի մեջ:

Այս առումով Ա. Իվանյանի թեկնածուական հետազոտությունը ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների արդիական ոլորտի է վերաբերում՝ տնտեսական խոսույթում կիրառվող կենդանուն արտահայտող, գունային և բնագիտական տերմինների համակողմանի ուսումնասիրությանը, որը մեծապես կարևորվում է ճանաչողական լեզվաբանության հարացույցում:

Հասարակական կյանքում անդադար տեղաշարժը, գիտատեխնիկական նորանոր ձեռքբերումները ծնում են նոր տերմինների ստեղծման, դրանցով տվյալ լեզվի բառապաշարը և մասնագիտական տերմինաբանությունը համալրելու անհրաժեշտություն: Ուստի բացառություն չէ գործարար անգլերենը, որտեղ կիրառվող տերմինաբանության զարգացումն ու ընդլայնումը անխուսափելի են:

Ներկայումս գիտության տարբեր բնագավառների զարգացման շնորհիվ տերմինների կազմության խնդիրների ուսումնասիրությունն ավելի է գրավում լեզվաբանների ուշադրությունը: Տերմինների տարբեր կաղապարների առանձնացումը, որոշակի հասկացություններ բնորոշող տերմինների վերհանումը և տերմինների կազմության օրինաչափությունների ուսումնասիրությունը ոչ միայն տեսական, այլև խիստ գործնական նշանակություն ունեն: Տերմինների ստեղծման գլխավոր աղբյուրը տվյալ լեզվի բառային կազմն է, որի միջոցով բառահիմքի վրա ստեղծվում և համակարգվում են նորանոր հասկացություններ: Ուստի դիտարկելով գիտական նոր հասկացությունների ստեղծումը որպես լեզվի բառապաշարի հարստացմանը նպաստող գործոն՝ անհրաժեշտություն է առաջանում կատարել նեղ մասնագիտական ուսումնասիրություն, մասնավորապես՝ գործարար անգլերենի ոլորտում առկա փոխաբերականացման հիմքով ստեղծված տերմինների ուսումնասիրություն:

Հետազոտության **արդիականությունը և կարևորությունը** պայմանավորված են այն հանգամանքով, որ չնայած մինչ այժմ կատարված բազում ուսումնասիրությունների, քննարկումների և վերլուծությունների առկայությանը, յուրաքանչյուր օր անհրաժեշտություն է առաջանում ստեղծել նոր տերմիններ՝ դրանք դարձնելով մեր առօրյա կյանքի մի մասը: Տրանստերմինոլոգիայի ուսումնասիրությունն առավել հրատապ է դառնում համաշխարհային գլոբալ զարգացումների արդի փուլում, երբ

աշխարհում ամեն վայրկյան ծագում և լեզուների մեջ են ներթափանցում տարաբնույթ տերմիններ: Այսօր ավելի են կարևորվում տրանստերմինոլոգիայի ուսումնասիրության հարցերը, երբ գիտությունը վերածվում է միջազգային, համամարդկային, տնտեսական, սոցիալական, նյութական, հոգևոր և այլ ոլորտների զարգացումն ապահովող հզոր գործոնի:

Աշխատանքի գիտական **նորույթը** պայմանավորված է տրանստերմինոլոգիայի ընդգրկուն նյութի հիման վրա փոխաբերականացման միջոցով գործարար անգլերենում տրանստերմինների ուսումնասիրությամբ:

Սույն աշխատանքի **տեսական նշանակությունը** պայմանավորված է տրանստերմինոլոգիայի վերաբերյալ տեսական պատկերացումները խորացնելու և համակարգելու կարևորությամբ:

Արուսյակ Իվանյանի քննությունից ակնհայտ է դառնում, որ տերմինաստեղծման փոխաբերական միջոցը եղել է և մնում է չափազանց կենսունակ: Ընդհանուր առմամբ, տերմինաբանական այս կամ այն բնագավառ նոր միավորներով պարբերաբար համալրելու պահանջը և գիտական հասկացություններ անվանելու համար տերմինաբանական նոր միավորների ստեղծման անհրաժեշտությունը բավարարվում են արդեն գոյություն ունեցող բառային միավորների կիրառության՝ հիմնական լեզվի առօրյա գործածական բառերի տերմինացման միջոցով: Ներկայացվող ատենախոսության լեզվական նյութ են ընտրվել զանազան կայքերից ու տերմինաբանական բառարաններից քաղված գործարար անգլերենի առանձին ճյուղերում առկա տրանստերմիններ: Արդյունքում ատենախոսը ուսումնասիրել է առանձին տերմիններ, որոնք փոխանցվելով մի գիտական ապարատից մյուս գիտական ապարատ, մասնակիորեն կամ ամբողջովին փոխել են իրենց իմաստը: Աշխատանքում հետազոտվել է արտակա (explicit) և ներակա (implicit) տրանստերմինոլոգիան:

Մեթոդաբանական առումով Ա. Իվանյանի ուսումնասիրության համար ելակետային է դիտվել ծագումնաբանական, բառիմաստային վերլուծության մեթոդների կիրառումը:



Աշխատանքի մեթոդաբանական հիմքը տերմինաբանության մասին տեսությունների ուսումնասիրություններն ու մեթոդներն են: Հիմք ընդունելով այնպիսի լեզվաբանների տեսությունները, ինչպիսիք են՝ Ա. Ա. Տելեգուզը, Ա. Գ. Ֆոմինը, Գ. Մ. Իսմաիլովը, Գ. Վասուչենկոն, Ն. Ն. Գորբունովան, Վ. Մ. Լեյչիկը և ուրիշներ:

Պետք է նշել, որ ատենախոսությունը **տեսակիրառական արժեք** ունեցող ամբողջական աշխատանք է: Վերջինս կարող է նպաստել գործարար անգլերենի դասավանդման արդյունավետությանը: Կարևոր է գործարար անգլերենի տրանստերմինների իմաստաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Հետազոտության կիրառական արժեքը նաև պայմանավորված է այն իրողությամբ, որ վերջինս կարող է հետաքրքրել և տեսական նյութ ծառայել լեզվի իմաստաբանության, բառագիտության, գործաբանության, ինչպես նաև գործարար անգլերենի խնդիրներն ուսումնասիրողների համար: Ստացված արդյունքները կարող են նպաստել գործարար անգլերենի դասավանդման արդյունավետությանը: Տնտեսական ոլորտի տրանստերմինների առանձնահատկությունների քննությունը կարող է հիմք դառնալ տերմինների բառարաններ կազմելիս: Ստացված արդյունքները կարող են նաև օգտագործվել հետագա ուսումնասիրությունների համար, նպաստել տնտեսական թեմաներով հրապարակումների լեզվաճանաչողական վերլուծությունների իրականացմանը:

Ատենախոսության թե տեսական, թե գործնական նյութի մանրազնին ու բարեխղճորեն կատարված վերլուծությունը հավաստում է հեղինակի գիտական ներուժի, հետազոտական իրազեկության և ինքնուրույնության մասին:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները պայմանավորել են աշխատանքի **կառուցվածքը**. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության և բառարանների ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու նորույթը, ձևակերպվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, նշվում կիրառված

մեթոդները և մեթոդաբանական հիմքը, ներկայացվում է տեսական և գործնական արժեքը, հիմնավորվում աշխատանքի կառուցվածքը:

**Առաջին գլխում (Գործարար անգլերենի տերմինաբանության բնորոշ գծերը)** ներկայացվել են հետազոտության տեսական հիմքերը՝ տարբեր հեղինակների առաջ քաշած դրույթներն ու հայեցակարգերը, տերմինաբանության ընդհանուր նկարագիրը, գործարար անգլերենը՝ որպես տնտեսական խոսույթի մաս, հասկացութային փոխաբերության առանձնահատկությունները գործարար տերմինաբանության մեջ:

**Երկրորդ գլխում (Տրանստերմինոլոգիան՝ որպես լեզվական երևույթ)** ուսումնասիրվում է տրանստերմինոլոգիան, վերջինիս տեսակները, ներակա և արտակա տրանստերմինոլոգիայի դրսևորումը գործարար անգլերենում, իմաստաբանական և ծագումնաբանական առանձնահատկությունները: Սույն գլխում ներկայացվում է գործարար անգլերենում կենդանուն արտահայտող, գունային, բնագիտական տրանստերմինների լեզվաբանական վերլուծություն:

**Երրորդ գլխում (Տրանստերմինոլոգիայի ճանաչողական նկարագիրը)** ուսումնասիրվում է տրանստերմինոլոգիայի տեսակները տնտեսական խոսույթում և գործարար անգլերենում:

**Եզրակացության** մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել ու ձևակերպվել են կարևորագույն դրույթները:

Ընդհանուր առմամբ, բարձր գնահատելով ատենախոսի կատարած մեծածավալ ուսումնասիրությունը, կցանկանայի խոսել մի քանի նկատառումների մասին.

1. Աշխատանքի ներածական մասում նշվում է, որ ուսումնասիրության նորույթը <.....փոխաբերականացման արդյունքում ձևավորված տրանստերմինների վերլուծությունն է և դասակարգումը.....> (էջ 7), սակայն հետագա շարադրանքում ատենախոսը անդրադարձ չի կատարում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինային միավորներին:

2. Աշխատանքի ներածական մասում նշվում է, որ <...ուսումնասիրության նորույթը կենդանուն արտահայտող, գունային և բնագիտական տրանստերմինների խոսքիմաստային պատկանելության, բառակազմական միջոցների և լեզվագործաբանական առանձնահատկությունների վերհանումն է... (էջ 7)>, սակայն աշխատանքում տերմինները չեն ենթարկվում բառակազմական վերլուծության: Հայտնի է, որ փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները հիմնականում կազմվում են բառակազմության հետևյալ տեսակներով՝ *ածանցում* և *բառաբարդում*: Բառակազմական վերլուծությունը կարելի է կատարել թե՛ տարժամանակյա, թե՛ համաժամանակյա տեսանկյունից:
- Նորույթը ձևակերպելիս նշվում է որ վերլուծության են ենթարկվում <.....տրանստերմինների խոսքիմաստային պատկանելության.....> հավանաբար **խոսքիմասային պատկանելություն**, որովհետև հետագա շարադրանքում ներկայացվում է տերմինների խոսքիմասային առանձնահատկությունները:
3. Աշխատանքը կշահեր եթե ատենախոսության մեջ տերմինները դիտարկվեին համատեքստում՝ փորձելով հասկանալ, թե արդյոք այդ բառերն իմաստային առումով որևէ ընդհանրություն ունեն իրենց ուղիղ իմաստի հետ, և արդյոք վերջիններս փոխաբերականացման արդյունքում դարձել են գործարար անգլերենի անքակտելի մասը:
4. Ցանկալի կլիներ, որ դիտարկվեր նաև տերմին ու բառ հասկացությունները՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով: Տերմինները սահմանում են գիտության, տեխնիկայի, մշակույթի և առհասարակ որևէ բնագավառի մասնագիտական հասկացություններ:
5. Աշխատանքն կշահեր, եթե ատենախոսը անդրադառնար տրանստերմինոլոգիայի առաջացման պատճառներին (տերմինների միգրացիայի հիմնական պատճառներին) տնտեսական խոսույթում:



6. Որոշ տերմինների թարգմանություններ հստակ չեն, օրինակ՝ **“Butterfly effect”** թարգմանվել է «Թիթեռնիկի երևույթը»; **“Ostrich effect”** թարգմանվել է «Ջայլամի երևույթը»; **barnacles** թարգմանվել է «թիթեռնիկներ» կամ «խեցգետնտանմաններ» և այլն:
7. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում է ոչ հստակ շարադրանք, օրինակ՝ *Կովի փոխաբերություն (էջ 63); Հավի շուկան բնութագրվում է վախով: Հավը չունի կոնկրետ պլան և գործում է գումարը կորցնելու մտավախությամբ: Խոզի շուկան ունի բարձր ռիսկի կամ կորստի միավորի դիրք: նապաստակի փոխաբերությունը (էջ 70); Շան փոխաբերությունը (էջ 73); սպառնալիք փոխաբերությունը (էջ 73); կենդանիների փոխաբերությունը (էջ 76) և այլն:*

Նշված հարցադրումները հայեցակարգային չեն և ամենևին չեն սուվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունը, որն առանձնանում է տեսական և գործնական նյութի վերլուծությամբ, կուռ և համապարփակ շարադրանքով, հարցադրումների հստակ պարզաբանումներով և գիտական պատշաճ ոճով: Ատենախոսության հիմնադրույթների գերակշիռ մասը պարունակում է որոշակի գիտական նորույթ և հիմնավորված նոր մոտեցումներ: Սույն հետազոտությամբ նոր հեռանկարներ են բացվում գործարար անգլերենի տերմինաբանության զարգացման համար:

Կարելի է նշել, որ Ա. Իվանյանը ամբողջովին իրականացրել է իր առջև դրված խնդիրները հարուստ նյութի և մի շարք մեթոդների հմուտ կիրառությամբ: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների վերնագրերը, տրամաբանական կառուցվածքն ու բովանդակությունը, արժարժվող խնդիրների ու հարցադրումների ներդաշնակ մեկտեղմամբ ամբողջական պատկեր են ստեղծում՝ վկայելով ատենախոսի իրազեկությունը թեմայի շրջանականերում:

Ա. Իվանյանի «Տրանստերմինոլոգիայի դրսևորումը գործարար անգլերենում» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ

